ՄԵՐԶԲԱԼԹԻԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐՈՒՄ

Մ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Սովետական Մերձբալթիկան իր աշխարհագրական դիրքով ռազմաստրատեգիական, քաղաքական և տնտեսական կարևոր նշանակություն ուներ Սովետական Միության հյուսիս-արևմտյան սահմանների և առանձնապես Լենինգրադի պաշտպանության համար։ Նրա տերիտորիան կազմում է 174,8 հազար քառակուսի կիլոմետր, իսկ բնակչության թիվը՝ մինչև 1941 թ. հասնում էր վեց միլիոնի։ Մերձբալթիկայում հաշվում էր 163 քաղաք և 61 քաղաքատիպ ավան[1]։ Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում էր գտնվում Կարմրադրոշ բալթյան նավատորմի գլխավոր բազան։ Մերձբալթյան նոր ստեղծված հատուկ ռազմական օկրուգում տեղակայված 8-րդ, 11-րդ և 26-րդ բանակների կազմում կար 25 դիվիզիա (որից 4-ը տանկային, իսկ 2-ը մոտոմեքենայացված) և հինգ ավիացիոն դիվիզիաներ։ Սովետական զորքերի դիմաց կանգնած էր թշնամու «Հյուսիս» բանակային խումբը, որի հիմնական խնդիրն էր Մերձբալթիկայում ջախջախել Կարմիր բանակի զորամասերը և «Կենտրոն» բանակային խմբի ձախ թևի հարվածային զորամասերի համագործակցությամբ գրավել Լենինգրադը։ Թշնամու «Հյուսիս» բանակային խմբի մեջ կային 30 հետևակային, 7 մեքենայացված և 6 տանկային դիվիզիաներ[2]։

Հայրենական մեծ պատերազմի հենց առաջին օրը՝ հունիսի 22-ին Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի ամբողջ երկարությամբ ծավալվեցին համառ ու արյունալի մարտեր։ Տաուրագեի շրջանում 125-րդ հրաձգային դիվիզիայի հրետանային դիվիզիոններից մեկը ավագ լեյտենանտ Կոլեգաևի հրամանատարությամբ ոչնչացրեց թշնամու 30 տանկ[3]։ Յուրա գետի մոտ 90-րդ հրաձգային դիվիզիայի 19-րդ գունդը մեկ ժամ տևած մարտի ընթացքում ոչնչացրեց 400 հիտլերական, 6 տանկ և 9 զնգացիր[4]։ Հունիսի 23-ին Ռասենյայի շրջանում 48-րդ հրաձգային դիվիզիան 14 անգամ ետ մղեց թշնամու գրոհները։ Այդ օրը ոչնչացվեց 20 տանկ[5]։ 18-օրյա համառ մարտերի ընթացքում ֆաշիստական զորքերը տեխնիկայի ու մարդկային ուժերի ծանր կորուստների գնով գրավեցին Լիտվան, Լատվիայի մի մասը և մոտեցան Արևմտյան Դվինա գետին։ Այնուհետև մոտ երեք ամսվա ծանր մարտերից հետո թշնամուն հաջողվեց գրավել Էստոնիան և մտնել Լենինգրադի մարզի սահմանները։

Հայրենական պատերազմի առաջին օրերի դաժան փորձություններում ռուս, ուկրաինացի, բելոռուս, լատվիացի, լիտվացի, էստոնացի, վրացի և մյուս ազգերի ժողովուրդների զավակների հետ ուս-ուսի սովետական Մերձ-

---

[1] Տե՛ս „История Прибалтийского военного округа", Рига, 1968, էջ 21։

[2] Նույն տեղում, էջ 53, 87։

[3] Տե՛ս ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության արխիվ (հետագայում ՍՍՀՄ ՊՄԱ), ֆ. 1178, գ. 48421, գ. 1, թ. 2։

[4] Նույն տեղում, ֆ. 1253, ց. 1, գ. 1, թ. 2։

[5] Նույն տեղում, ֆ. 1554, ց. 1, գ. 2, թ. 14։

բալթիկա ներխուժած թշնամու դեմ հերոսաբար մարտնչում էին նաև հայ ժողովրդի հազարավոր զավակները՝ մարտերում դրսևորելով բարոյա-քաղաքական ու մարտական վարպետության բարձր հատկություններ։

Դեռ պատերազմի նախօրյակին Մերձբալթյան հատուկ և Լենինգրադյան ռայմական օկրուգներում էին ծառայում 1939—1940 թթ. Անդրկովկասից բանակ զորակոչված մեծ թվով հայեր[6]։ Մարտական գործողությունների հենց սկզբից, տարբեր ղեղատեսակներում գտնվող հայ ռազմիկները մարտի էին նետվում այն բարձր գիտակցությամբ, որ ազատ Հայաստանի բախտը որոշվում է այնտեղ, որտեղ մարտ է մղվում հիտլերականների դեմ։ Հայ ռազմիկները աչքի են ընկել ոչ միայն կարգապահությամբ ու խիզախությամբ, այլև բարոյական բարձր դիտակցությամբ։ 28-րդ տանկային դիվիզիայի կարմիրբանակային Գյուլումյանը[7] զորամասի ժողովում հանդես գալով հայտարարեց. «Մենք թշնամիներին միշտ հաղթել ենք և այժմ էլ կհաղթենք։ Քաղաքացիական պատերազմի տարիներին մենք չունեինք տեխնիկա, բայց հաղթեցինք բոլոր կողմերից մեր երիտասարդ հանրապետությանը օղակած թշնամիների բանդային, իսկ այժմ հաղթանակի համար մենք ունենք ամեն ինչ»[8]։ Թշնամու նկատմամբ ատելությամբ ու նրան անխնա հարվածելու ձգտումով էր տոգորված նույն միավորման 28-րդ հաուբիցային հրետանային գնդի 5-րդ մարտկոցի կարմիրբանակային կոմերիտական Գրիգորյանը։ «Ես կհարվածեմ թշնամուն իմ թնդանոթից,—իր ելույթում ասաց նա,—իսկ եթե այն չգործի, հրացանը ձեռքիս կենտվեմ դեպի թշնամին և կհարվածեմ նրան սվինով ու խզակոթով։ Եվ եթե այն էլ շարքից դուրս դա թշնամուն կհարվածեմ նրանով ինչ-որ ձեռքս ընկնի։ Հանուն հայրենիքի պատրաստ եմ տալու իմ արյունը»[9]։ Թշնամուն հաղթելու մեծ հավատով է տոգորված 11-րդ բանակի 202-րդ հրաձգային դիվիզիայի կրտսեր հրամանատարների դասընթացների գերազանցիկ Մանասյանը։ Հանդես գալով զորամասի անձնակազմի առջև նա հայտարարեց. «Հիտլերը պատերազմ է սանձազերծել ՍՍՀՄ-ի դեմ։ Նա նպատակ է դրել ոչ միայն ոչընչացնել ռուս ժողովրդին, այլև մեր անծայրածիր մեծ հայրենիքի ժողովուրդներին՝ հայերին, վրացիներին, թաթարներին, ղազախներին և ուրիշների... Հիտլերը մտածում է «կայծակնային պատերազմով» սոցիալիստական առաջին պետության ոչնչացման մասին։ Այդպես չի լինի։ Ֆաշիզմը կջախջախվի և կոչնչացվի»[10]։ Նույն հավատով էր համակված նաև 3-րդ հրաձգային բրիգադի կարմիրբանակային Ալդադյանը. «Հիտլերը ցանկանում է ստրկացնել մեր ժողովուրդներին։ Այդ նրան չի հաջողվի։ Մենք կլինենք Բեռլինում և ես այնտեղ կկատարեմ իմ սիրելի «Երևան, իմ Երևան» երգը»[11]։

Բազմաթիվ հայ ռազմիկներ պատերազմի հենց առաջին օրերին ցանկանում էին մարտի գնալ որպես կոմունիստներ և խնդրում էին իրենց ընդունել կոմունիստական կուսակցության շարքերը։ Կոմերիտական Գրիգորյանն իր դիմումում գրել է. «Ես կոմերիտական եմ 1931 թ.։ Ինչպես վայել է կոմերիտա-

---

6 ՏԼ՚ս ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 320, թ. 70 և գ. 319, թ. 30, 90։

7 Զորամասերի ու ստորաբաժանումների զեկուցագրերում, որպես կանոն նշվում է միայն ազգանունը։

8 ՍՍՀՄ ՊՄԱ, ֆ. 221, ց. 1362, գ. 54, թ. 1։

9 Նույն տեղում, թ. 38։

10 Նույն տեղում, ֆ. 357, ց. 5984, գ. 5, թ. 185։

11 Նույն տեղում, ֆ. 221, ց. 1362, գ. 81, թ. 8։

կտնին թշնամու դեմ կռվել եմ հունիսի 26-ից։ Երկրորդ անգամ մարտի եմ ցանկանում գնալ որպես կոմունիստ։ Խնդրում եմ ինձ ընդունել Համկ(բ)Պ շարքերը որպես անդամության թեկնածու»[12]։ 3-րդ հրաձգային բրիգադի կարմիրբանակային Անանյանը գրել է. «Իմ հայրը, մայրը, եղբայրը ու քույրը. բոլորը կուսակցության անդամ են։ Ես նույնպես որոշեցի դառնալ մեծ Լենինի կուսակցության անդամության թեկնածու։ Ձեր վստահությունը ես պատվով կարդարացնեմ ռազմաճակատում»[13]։ 118-րդ հրաձգային դիվիզիայի կրտսեր սերժանտ Մասարյանը զորամասի կուսակցական կազմակերպությանն ուղղված գիմումում գրել է. «Գնդի կուսակցական կազմակերպությանը խնդրում եմ ինձ ընդունել Համկ(բ)Պ-ի շարքերը։ Ես ցանկանում եմ մարտի գնալ որպես կոմունիստ, իսկ եթե մարտում զոհվեմ, խնդրում եմ ինձ համարել կոմունիստ։ Թշնամուն կհարվածեմ մինչև նրա լրիվ ոչնչացումը»[14]։

Հայ ռազմիկների հայրենասիրական կրակոտ ելույթները զորամասերի ժողովներում ու միտինգներում, նրանց բուռն, ինքնաբուխ ցանկությունը՝ թշնամու դեմ կռվել որպես կոմունիստ, վկայում է նրանց բարոյա-քաղաքական բարձր բգու, հայրենասիրության, հայրենիքին ու կոմունիստական կուսակցությանն անսահման նվիրվածության մասին։ Դա հաստատվում է նրանց ցուցաբերած հերոսական սխրագործությունների բազմաթիվ օրինակներով։

Թշնամու դեմ քաջաբար մարտնչողների ավանգարդում էին քաղաշխատողները, կոմունիստներն ու կոմերիտականները։ 23-րդ հրաձգային դիվիզիայի քաղբաժնի 1941 թ. հուլիսի 7-ի զեկուցագիրը վկայում է, որ «գումարտակային կոմիսար ընկ. Թովմասյանը Կարմելավայի տակ (Կաունասի մոտ) մղված մարտերում դրսևորեց անձնական նախաձեռնություն, մարտիկներից կազմակերպեց ջոկատ և նրանց գրոհի տարավ»[15]։ Դրանից 14 օր անց Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի «Ձնամյա սովետով» թերթում տպագրված «Գիշերային հանդիպակաց մարտը» խորագրով հոդվածում նկարագրվում է հունիսի 26-ին տեղի ունեցած մարտը, որի ժամանակ աչքի ընկավ կոմիսար Թովմասյանը։ 89-րդ գունդը, որը մտնում էր 23-րդ հրաձգային դիվիզիայի մեջ, հրաման ստացավ ոչնչացնել Կարմելավայում ամրացված թշնամուն։ Գունդը դեռ դիրքեր չգրաված՝ ենթարկվեց թշնամու հարձակմանը։ Ստեղծվեց շատ լարված վիճակ։ Արկերի ու ռումբերի անընդհատ պայթյունները, օդում ազատ գործող թշնամու վայրասլաց ինքնաթիռների խլացուցիչ ոռնոցը մի ակնթարթ ընկրկեցին առաջին անգամ մարտի մեջ մտնող կարմիրբանակայիններին։ Անհրաժեշտ էր խիզախության դիմելու անձնական օրինակ ցույց տալ։ Գումարտակային կոմիսար Ղազար Թովմասյանը[16] արագ կողմնորոշվելով, իր շուրջը համախմբեց մարտիկներին և գրոհի տարավ։ Ոգևորված իրենց կոմիսարի համարձակ ու անձնազոհ օրինակով, արհամարհելով մահը, կուռ շղթաներով գրոհի նետվեցին

12 Նույն տեղում, գ. 83, թ. 122։

13 Նույն տեղում, դ. 81, թ. 5։

14 Նույն տեղում, ֆ. 1323, ց. 1, գ. 21, թ. 32։

15 Նույն տեղում, ֆ. 357, ց. 5984, գ. 12, թ. 11։

16 Գումարտակային կոմիսար Ղազար Գրիգորի Թովմասյանը 1927-ին ավարտել է հայկական միացյալ զինվորական դպրոցը, իսկ 1940 թ. Վ. Ի. Լենինի անվան ռազմա-քաղաքական ակադեմիան՝ գերազանցիկի դիպլոմով։ Նրա կինը՝ Զոյա Թովմասյանը և դուստրը՝ Սիլվան 1941 թ. Դիգայից էվակուացվել են Հայաստան և բնակություն հաստատել Երևանում։ Նրանք մինչև վերջերս չգիտեին Ղազար Թովմասյանի հերոսական մահվան մասին։

Միրոշնիչենկոյի և Կրուղլիկովի գումարտակները։ Զդիմանալով հակադրությանը, թշնամին ստիպված նահանջեց ավելի քան վեց կիլոմետր, ռազմադաշտում թողնելով 800—900 սպանված զինվոր ու սպա[17]։ Այդ օրը քաջի մահով զոհվեց կոմիսար Թովմասյանը[18]։

Կարմրադրոշ բալթյան նավատորմի օդային ուժերում մեծ ճանաչում ու հեղինակություն էր վայելում 8-րդ ավիորրիգադի առաջին զնդի կոմիսար Գրիգորի Օգանեզովը, որը զնդի հրամանատար, գնդապետ Ց. Ն. Պրեոբրաժենսկու հետ 1941 թ. օգոստոսին ղեկավարել է Բեռլին, Համբուրգ և գերմանական մյուս քաղաքների ռմբակոծությունը։ Հունիսի 22-ից մինչև հոկտեմբերի 8-ը այդ զունդը կատարել է 1131 մարտական թռիչք, որից 78-ը Բեռլինի և գերմանական մյուս արդյունաբերական կենտրոնների վրա[19]։ Վերհիշելով իր մարտական զինակցին, Ն. Սմիրնովը իր գրքում, հետագայում Օգանեզովի մասին գրում է. «Քաղաքական աշխատանքում գլխավորը և վճռականը նա համարում էր հոգատարություն դնալի մարդը, զգայուն, ուշադիր վերաբերմունքը՝ օդաչուի, շտուրմանի, հրաձգի, ռադիստի, գնդի յուրաքանչյուր մարտիկի նկատմամբ։ Եվ իզուր չէր, որ բաղրաժենում Գ. Զ. Օգանեզովին անվանում էին հոգեբան»[20]։

Բեռլին և գերմանական մյուս քաղաքների ռմբակոծումները լավ նախապատրաստելու և քաղաքական աշխատանքը ապահովելու գործում ցուցաբերած ծառայությունների համար 1941 թ. դեկտեմբերին կոմիսար Գ. Օգանեզովը պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով[21]։

Պաշտպանական մարտերի ընթացքում տարբեր զորամասերի հայ քաղաքախատողներից աչքի են ընկել նաև Սիմոն Սարդսյանը, Արամ Սիլանյանը, Աշոտ Մկրտչյանը, Խաչատուր Պետրոսյանը և շատ ուրիշներ։

Մեր հերոսները ներխուժած թշնամու դեմ առաջին հերոսական մարտերը մղեցին սահմանապահները։ Նրանց շարքերում աչքի ընկան նաև հայ սահմանապահները։ 12-րդ սահմանապահ կայազորի առաջին բաժանմունքի պետ մայոր Արտավազդ Կնդեխցյանը[22] իր շուրջը համախմբելով ցրված սահմանապահներին, անհավասար մարտի մեջ մտավ թշնամու դեմ։ Ստիպված լինելով նահանջել դեպի Լիեպայա, նա սահմանապահների խմբով մասնակցեց ռազմա-ծովային բազայի համար մղված հերոսամարտին և ծանր կորուստներ պատճառեց թշնամուն։ 1941 թ. հունիսի 27-ին, երբ թշնամին ներխուժեց Լիեպայա, սահմանապահները մայոր Կնդեխցյանի ղեկավարությամբ շենքերից մեկում շրջանաձև պաշտպանություն գրավեցին։ Հիտլերականները մեծաթիվ ուժերով շրջապատեցին շենքը, երեք անգամ գրոհի դիմեցին, բայց արդյունքի չհասան։ Ֆաշիստները գոչում էին՝ «ռուս հանձնվիր», իսկ սահմանապահները պատասխանում էին մահարեր գնդակներով ու նռնակներով։ Անհաջողությունից կատաղած հիտլե-

---

17 Տե՛ս ՍՍՀՄ ՊՄԱ, ֆ. 357, ց. 5984, գ. 3, թ. 10—11։

18 Նույն տեղում, գ. 107, թ. 9։

19 Տե՛ս ՍՍՀՄ Ռազմա-ծովային նավատորմի կենտրոնական (ՌԾԿ) արխիվ, ֆ. 88, ց. 2, գ. 461, թ. 196։

20 Տե՛ս Н. К. Смирнов, Матросы защищают родину, Москва, 1962, стр. 108.

21 Տե՛ս ՌԾԿ արխիվ, ֆ. 88, ց. 2, գ. 461, թ. 196։

22 Մայոր Արտավազդ Հակորի Կնդեխցյանը ծնվել է 1905 թ., Լենինական քաղաքում, ար հեստավորի ընտանիքում։ 1925 թ. սովորել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում, բայց չի ավարտել։ 1926 թ. տեղափոխվել է Թբիլիսի, որտեղ 1929 թ. ավարտել է հետևակային ռազմական դպրոցը։ Մինչև պատերազմի սկսվելը ծառայել է սահմանապահ զորամասերում։

բականները հրդեհեցին շենքը, բայց ողջակիզվող սահմանապահներից ոչ ոք փրկվելու փորձ չարեց։ Դեպքին ականատես բնակիչները հետագայում պատմել են, որ շենքի ներսից լսվում էր «Ինտերնացիոնալ» երգը։ Սահմանապահների խումբը մայոր Արտավազդ Կնդեխցյանի գլխավորությամբ արիաբար ընդունեցին մահը, այն գերադասելով ֆաշիստական գերությունից[23]։

Մարտական գործողությունների հատվածներից մեկում, խառն իրադրության մեջ զորամասը ղեկավարելու լավագույն ունակություններ դրսևորեց Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի օպերատիվ բաժնի պետի տեղակալ մայոր Անդրանիկ Սարգսյանը։ Ռազմաճակատի ռազմական խորհրդի հրամանով նրան հանձնարարվեց լինել մարտական գործողությունների վայրում, պարզել իրադրությունը և այդ մասին զեկույց ներկայացնել հրամանատարությանը։ Հուլիսի 7-ին նա եղավ ռազմաճակատի առաջին գծում, հանդիպեց 1-ին մեքենայացված կորպուսի, 3-րդ տանկային դիվիզիայի, 3-րդ մոտոհրաձգային գնդի մարտիկներին, որոնք անկանոն նահանջում էին։ Գնդի անձնակազմից մնացել էր 67 մարդ, այն էլ առանց հրամանատարի։

Ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Բոչկովի հրամանով Սարգսյանը ստանձնեց գնդի հրամանատարությունը և կարճ ժամանակում շարքից դուրս եկած նահանջող զորամասերի մնացորդներից, գնդի թվական կազմը հասցրեց 1500-ի։ Մարտունակությունը վերականգնած գունդը Սարգսյանի գլխավորությամբ տաս օր՝ հուլիսի 8—18-ը դիմադրեց թշնամու գերազանցող ուժերին՝ կասեցնելով նրա առաջշարժումը[24]։

Մարտական առաջադրանքը պատվով կատարելու և մարտում ցուցաբերած սխրագործության համար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հուլիսի 25-ի հրամանագրով Անդրանիկ Սարգսյանը պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով[25]։

Ռազմաճակատի հրամանատարությունը հաշվի առնելով երիտասարդ հրամանատարի կարողությունները նրան հանձնարարեց զեկուցագիր ներկայացնել ռազմաճակատի բարդ իրադրության մասին։ Այդ դժվարին և արտակարգ պատասխանատու առաջադրանքը ևս մայոր Անդրանիկ Սարգսյանը կատարեց պատվով և արժանացավ ռազմաճակատի հրամանատարության շնորհակալությանը, ստացավ արծաթե սուր[26]։

Հունիսի 22-ին, երբ համառ մարտեր ծավալվեցին Յուրա գետի շրջանում սահմանը ներխուժած թշնամու ստորաբաժանումների և 90-րդ հրաձգային դիվիզիայի նահանջը պաշտպանող 186-րդ գնդի գնդացրային դասակի միջև, հրամանատարական իր համարձակությամբ ու անձնազոհությամբ աչքի ընկավ դասակի հրամանատար Աշոտ Ղազարյանը[27]։ Դասակը երկու օր դիմակայեց հիտլերականներին։ Անհաջողությունից գազազած թշնամին Աշոտ Ղազարյանի փոքրաթիվ ջոկատի դեմ նետեց թնդանոթներով և գնդացիրներով լավ զինված

---

23 Տե՛ս „Правда", 22, VI. 1966.

24 ՍՍՀՄ ՊՄԱ, Ա. Ս. Սարգսյանի անձնական գործ, № 1580362, թ. 13։

25 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ՀՊՊԿ արխիվ, ֆ. 284, գ. 1, թ. 1—2։

26 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետի (ՀՊՊԿ) արխիվ, ֆ. 284, գ. 4, թ. 4։

27 Աշոտ Ղազարյանին, Մերձբալթիկայի ազատագրման համար մղված մարտերում ցուցաբերած խիզախության և արիության համար, 1944 թ. շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

200 հոգուց բաղկացած մի ստորաբաժանում։ 3-րդ օրը, երբ հիտլերականները փորձում էին անցնել դնտը, դասակը գնդացրային ուժեղ կրակով մինչև վերջին պինվորը ոչնչացրեց դրոհող ֆաշիստներին։ Ստորաբաժանումը դիրքերը թողեց միայն հրամանատարության հրամանից հետո[28]։

Կաունասի համար մղված մարտերում 61-րդ դիվիզիոնի հրետանավորները, մայոր Ս՝ամբրև Գևորգյանի հրամանատարությամբ ծանր կորուստներ պատճառեցին թշնամուն։ Հրետանավորների դիմադրությունն ընկճելու համար թշնամին հունիսի 26-ին անցավ հոգեբանական գրոհի։ Գևորգյանը հմտորեն ղեկավարելով մարտը, հրետանային փոթորկալից կրակով ստիպեց թշնամուն դադարեցնել հարձակումը, ապա և նահանջել։ Մարտական դիրքում հերոսաբար զոհված հրամանատարը նամահու պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[29]։

Լենինգրադի պաշտպանությունը ուժեղացնելու համար 8-րդ բանակի հրամանատարությունը օգոստոսի 18-ին Նարվայից դուրս բերեց Կարմիր բանակի զորամասերը։ Մեր զորքերի գետանցումը ուղեկցվում էր թշնամու դեմ մղվող կատաղի մարտերով։ 301-րդ գնդի մարտիկները գերմարդկային ջանք գործադրելով հերոսաբար ետ էին մղում թշնամու անընդհատ գրոհները։ Այդ ընթացքում համարձակության ու խիզախության հիանալի օրինակ տվեց 48-րդ հրաձգային դիվիզիայի 301-րդ գնդի գումարտակի հրամանատար, կոմերիտական, լեյտենանտ Վ. Կիդիրյանը։ Մարտի ամենածանր պահին նա գունդը երկրորդ անգամ գրոհի տարավ։ Հակառակորդը ետ շպրտվեց, բայց որոշ ժամանակ անց համալրելով իր ուժերը նորից սկսեց գրոհը, ձգտելով խափանել մեր զորամասերի գետանցումը։ Կիդիրյանը երրորդ անգամ գունդը գրոհի տարավ և նորից ձախողեց հակառակորդի մտադրությունը։ Այդ գրոհի ժամանակ հերոսի մահով ընկավ քաջարի լեյտենանտ Կիդիրյանը[30]։ Նրա ամուր կամքը, վճռականությունը, անսահման նվիրվածությունը հայրենիքին՝ հաղթեցին թշնամուն և ապահովեցին 8-րդ բանակի գետանցը Նարվայի արևելյան ափը։

Ռազմաճակատի տարբեր հատվածներում մղված պաշտպանական մարտերի ժամանակ թշնամուն կենդանի ուժի ու տեխնիկայի ծանր կորուստներ պատճառեցին գնդապետ Սերգեյ Կարապետյանի, մայորներ Անդրանիկ Սարգսյանի, Քրիստափոր Ժելուխյանի, Գևորգ Միրզոյանի, կապիտաններ Գերասիմ Հակոբյանի, Ռուբեն Աղաջանյանի և ավիացիոն ինժեներ Արշավիր Գրիգորյանի հրամանատարությամբ գործող զորամասերն ու ստորաբաժանումները։

Մեր զորքերի համար ստեղծված անբարենպաստ իրադրության պայմաններում զենքին վարպետորեն տիրապետելու, թշնամուն դիպուկ հարվածելու լավագույն ունակություններ դրսևորեցին հայ հրետանավորները։ 48-րդ հրաձգային դիվիզիայի 301-րդ գնդի ականանետային մարտկոցը, կրտսեր լեյտենանտ Գևորգ Հարությունովի հրամանատարությամբ հունիսի 23-ին, Ռասեյնյայի շրջանում ոչնչացրեց մի քանի տանկ և փոթորկալից կրակով ցրեց թշնամու մոտոմեքենայացված վաշտի շարքերը[31]։ Հուլիսի 3-ին, Ռեզեկնե քաղաքի մոտ 163-րդ մոտոմեքենայացված դիվիզիայի 365-րդ հրետանային դասակի հրամանատար, լեյտենանտ Պավել Վարդանյանցը անձամբ ոչնչացրեց 6 տանկ[32]։

---

28 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ՀՊՊԿ արխիվ, ֆ. 104, գ. 3, թ. 1։

29 Տե՛ս ՍՍՀՄ ՊՄԱ, ֆ. 226, ց. 1386, գ. 47, թ. 24։

30 Նույն տեղում, ֆ. 344, ց. 5592, գ. 19, թ. 68, 80, ֆ. 1154, ց. 1, գ. 137, թ. 88։

31 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1154, ց. 2, գ. 10, թ. 47։

32 Տե՛ս նույն տեղում, ֆ. 221, ց. 1362, գ. 65, թ. 7։

Բարձր մարտունակություն ու դժվարին մարտում մեծ դիմացկունություն դրսևորեց 47-րդ կորպուսային հրետանու գունդը, որի կազմում կային 200 հայ զինվորներ ու սերժանտներ[33]։ Հունիսի 26-ին, Ռաուդենի շրջանում Ռուբեն Եղիազարյանի և Մեխակ Հովհաննիսյանի հրետանային հաշվարկները ուժեղ կրակով օգնեցին շրջապատումից դուրս գալու գնդի 2-րդ և 8-րդ մարտկոցներին և մի քանի անգամ փախուստի մատնեցին թշնամուն[34]։ Այդ մարտերում աչքի ընկան նաև հրետանավորներ Մ. Մարտիրոսյանը, Վ. Վարդանյանը, Ց. Մեսրոյանը և ուրիշներ։

Մերձբալթիկայի համար մղված մարտերի ժամանակ այդ գնդի հայ մարտիկներից շատերը հերոսաբար զոհվեցին, սրբորեն կատարելով իրենց պարտքը հայրենիքի նկատմամբ։ Լիտվայում զոհվեցին Մակար Սարգսյանը, Սարդիս Առաքելյանը, Գրիգոր Հայրապետյանը, Էստոնիայում՝ Մկրտիչ Դավթյանը, Ազասի Մարգարյանը, Աղվան Սարգսյանը և ուրիշներ[35]։

Հրետանավորներից ետ չէին մնում հայ տանկիստները։ Ահա մի վառ օրինակ. պատերազմի սկզբին, Հյուսիս-արևմտյան ռազմաճակատում մեծ համբավ էր վայելում 48-րդ տանկային գնդի, 2-րդ գումարտակի կոմերիտական կազմակերպիչ, տանկիստ Մ. Մ. Բաբայանը։ Նրա կոմերիտական ու մարտական աշխատանքի փորձը տարածվեց ռազմաճակատի զորամասերում։ Նա ստորաբաժանման մարտական թերթիկի խմբագիրն էր։ Մարտերից մեկի ժամանակ, երբ թշնամու թիկունքում արկի պայթյունից վնասվել էր կոմերիտական Դեմիտրյատկոմի տանկը, հրետանային ու գնդացրային կրակի տակ, Բաբայանն իր տանկով մոտեցավ նրան և ընկերոջը օգնեց վերացնելու վնասվածքը։ Մեկ այլ գրոհի ժամանակ խփվեց Նագնիբիդիի տանկը։ Անխուսափելի մահից ընկերներին փրկելու ձգտումը տանկիստ Բաբայանին մղեց համարձակ գործողության։ Խուսափելով թշնամու հարվածներից, նրա տանկը մոտեցավ խփված սովետական տանկին, շղթայակցեց և մեծ դժվարությամբ ռազմադաշտից դուրս բերեց տանկն ու նրա անձնակազմին։ «Եվ այսպես,—ասված է ռազմաճակատի քաղվարչության շրջաբերականում,—կոմերիտական կազմակերպիչ ընկ. Մ. Բաբայանը բոլշևիկյան կրակոտ խոսքով ու գործով իր դասակի կոմերիտականներին ու երիտասարդներին անխնա պայքարի էր մղում ֆաշիստական ավազակների դեմ»[36]։

Մերձբալթիկան ներխուժող թշնամու դեմ մղված մարտերում 1941 թ. բազմաթիվ փառապանծ գործեր կատարեցին հայ օդաչուներն ու նավատորմայինները։ Հայրենական պատերազմի սկսելու երրորդ օրը, Սովետական Միության հերոս, օդաչու Նիկոլայ Գաստելլոյի անօրինակ սխրանքից երկու օր առաջ, բացառիկ քաջագործություն կատարեց Սարդիս Միքայելի Հայրապետովը։ Հունիսի 24-ին 31-րդ խոյընթաց ռմբակոծիչ գունդը մարտական առաջադրանք ստացավ Տիլզիտի շրջանում ռմբակոծել թշնամու տանկային շարասյունը։ Գնդի էսկադրիլաներից մեկը գլխավորում էր ավագ քաղղեկ Սարդիս Հայրապետովը։ Նրա օդաչուները մարտական առաջադրանքը կատարեցին փայլուն հաջողությամբ, ֆաշիստական տանկային շարասյունը լիովին ջախջախեցին։ Բայց կոմիսարի

33 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ՀՊՊԿ, ֆ. 265, գ. 2, թ. 1։
34 Տե՛ս ՍՍՀՄ ՊՄԱ, ֆ. 14-րդ հրետ. գունդ, ց. 595975, գ. 1, թ. 12։
35 Նույն տեղում, ց. 456575, գ. 7, թ. 16, 17, գ. 8, թ. 10, 30։
36 Նույն տեղում, ֆ. 221, թ. 1362, գ. 16, թ. 381։

ինքնաթիռի շարժիչը օդային մարտում վնասվել էր, ապա բռնկվել բոցերով։ Քայակորով օդաչուն սակայն չկորցրեց իրեն։ Լարելով իր բոլոր ուժերը, Հայրապետովը իր այրվող ինքնաթիռը ուղղեց դեպի թշնամու տանկային շարասյունը և մխրճվեց նրա մեջ։ Այդ եղակի սխրագործության մասին «Վո սլավա ռոդինիս» թերթի 1942 թ. փետրվարի 27-ի համարում տպագրվեց հայազգի լրագրող Գեորգի Խոլոպովի ակնարկը՝ «Առաջին Գաստելոն» վերնագրով[37]։

38-րդ ավիացիոն կործանիչ գնդի կազմում բազմիցս աչքի ընկավ էսկադրիլայի կոմիսար, ավագ բաղդեկ Լազար Սերգեյի Զափչախովը։ Նա մինչև 1941 թ. հոկտեմբերը Հյուսիս-արևմտյան ռազմաճակատում[38] կատարեց 130 մարտական թռիչք և օդային մարտում ոչնչացրեց թշնամու 8 ինքնաթիռ, որից չորսը խմբային մարտում[39]։

1941 թ. օգոստոսի 20-ին նա սկսեց թռչել գրոհիչ ինքնաթիռով և թշնամուն կենդանի ուժի ու տեխնիկայի ծանր կորուստներ պատճառեց։ Օգոստոսի 26-ին նա ոմբակոծեց ռազմամթերքով ու պարենամթերքով բեռնված 40 մեքենայից բաղկացած թշնամու ավտոշարասյունը։ Հաջորդ օրը Դապի Նիվի շրջանում՝ ոչնչացրեց երկու աէրոստատ և ոմբակոծեց հակառակորդի ավտոշարասյունը[40]։

Զափչախովի անունը մի շարք անգամ հիշատակվեց Կարմիր բանակի գլխավոր քաղաքական վարչությանն ուղարկված զեկույցներում։ 1941 թ. օգոստոսի 2-ի և 8-ի զեկուցագրերում մասնավորապես ընդգծվում է, որ 8-րդ ավիացիոն գնդի էսկադրիլայի կոմիսար Զափչախովը իր անձնական օրինակով դաստիարակում է արիասիրտ օդաչուներ... Զափչախովի դաստիարակած օդաչուներ Գորբանևը, Շևխովցևը և ուրիշներ մարտական պայմաններում առաջադրանքը կատարում են գերազանց։ Օդային մարտերում նրանք խփել են յոթ ինքնաթիռ[41]։

Մարտերում ցուցաբերած արիության ու խիզախության համար Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի հրամանատարի 1941 թ. նոյեմբերի 27-ի № 031 հրամանով ավագ բաղդեկ Լազար Զափչախովը պարգևատրվեց Լենինի շքանշանով[42], իսկ 1942 թ. հուլիսի 21-ին նրան շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Լազար Զափչախովը հայ ռազմիկներից առաջինն էր, որ Հայրենական պատերազմում արժանացավ այդ բարձր կոչմանը։

Թշնամու կենդանի ուժին ու տեխնիկային ծանր կորուստներ պատճառեցին օդաչուներ Գեղամ Պետրոսյանը, Հարություն Փարսուղյանը, Ալեքսանդր Խաչատուրովը և ուրիշներ։ Մերձբալթիկայի համար մղված օդային մարտերում իր անօրինակ սխրագործությունների սկիզբը դրեց անվեհեր օդաչու Նելսոն Ստեփանյանը[43]։

---

37 Տե՛ս «Երեկոյան Երևան», 2. III. 1970։

38 Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Գիրք հերոսների մասին» կոլեկտիվ աշխատության մեջ թույլ է տրված վրիպակ։ Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի փոխարեն գրված է, որ Լազար Զափչախովը պատերազմի սկզբին մասնակցել է Արևմտյան Ուկրաինայում մղված պաշտպանական մարտերին։ Նա 1941 թ. հունիսի 22-ից մինչև 1942 թ. ապրիլը թշնամու դեմ մարտնչել է Հյուսիս-արևմտյան ռազմաճակատում։

39 Տե՛ս ՍՍՀՄ ՊՄԱ, ֆ. 221, ց. 1386, դ. 65, թ. 13—14։

40 Նույն տեղում։

41 Տե՛ս նույն տեղում, ց. 1362, դ. 16, թթ. 105, 137։

42 Նույն տեղում, ց. 1386, դ. 65, թ. 15։

43 Մովային զրոհիչ օդաչու Նելսոն Ստեփանյանին, որին անվանում էին «Մերձբալթիկայի մրրկահավ», 1942 թ. հոկտեմբերի 23-ին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում, իսկ 1945 թ. մարտի 6-ին՝ նամահու այդ բարձր կոչմանն արժանացավ երկրորդ անգամ։

Էստոնիայի մայրաքաղաք Տալլինի հերոսական պաշտպանության օրերին աչքի ընկավ կարմրադրոշ Բալթյան նավատորմի հրետանու թեթև ուժերի հրամանատար, երկրորդ կարգի կապիտան Արտավազդ Սագոյանը[44]։ 1941 թ. օգոստոսին նրա հրետանավորները Տալլինի ծովային մատույցներում խորտակեցին թշնամու երկու փոխադրանավ, երկու կատեր, իսկ երկու այլ փոխադրանավի ծանր վնասվածքներ պատճառեցին[45]։

Տալլինի Մոնզունդյան կղզիների ու Խանկո թերակղզու համար մղված մարտերում աչքի ընկավ ականորս նավի մարտական հրամանատար, ավագ լեյտենանտ Պետրոս Պետրոսյանը։ Տալլինից-Կրոնշտադ կատարած սովետական նավերի երթի ժամանակ նա անձամբ փրկեց ծովում խեղդվող 20 մարտիկի կյանք։ Ականորս նավով հինգ անգամ կտրեց անցավ Կրոնշտադ-Խանկո տարածությունը՝ թերակղզու պաշտպաններին հասցնելով պարենամթերք ու ռազմամթերք, իսկ կայազորի էվակուացման ժամանակ, փոխարինելով վիրավորված հրամանատարին, նավը դուրս բերեց թշնամու հրետանու կրակադաշտից և հաջողությամբ հասցրեց Լենինգրադ[46]։

Սովետական Միության մյուս ժողովուրդների ներկայացուցիչների և առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի զավակների հետ կողք-կողքի, հայ ռազմիկները մարտի էին նետվում թշնամու դեմ՝ լիովին գիտակցելով, որ պաշտպանելով Մերձբալթիկան, դրանով իսկ պաշտպանում են իրենց հարազատ հայրենիքը՝ Սովետական Հայաստանը։

ОБОРОНИТЕЛЬНЫЕ БОИ В ПРИБАЛТИКЕ

М. Г. СААКЯН

Резюме

Тысячи сынов армянского народа приняли активное участие в героических боях за Советскую Прибалтику в июне-сентябре 1941 года. Многочисленные воины-армяне, прежде чем вступить в бой, подавали заявление о приеме их в ряды коммунистической партии.

В первые дни войны многие из них удостоились правительственных наград. Так, заместитель начальника оперативного отдела Северо-западного фронта Андраник Саркисян за умелое выполнение заданий командования получил орден Красного знамени. В боях за оборону Каунаса отличился артиллерийский дивизион майора Мамбре Геворгяна. На различных участках фронта героически сражались воинские части и подразделения под руководством полковника Сергея Карапетяна, майора Георга Мирзояна, капитана Герасима Акопяна и др. В рядах 47-го корпусного артиллерийского полка храбро сражались 200 воинов-армян.

В боях за оборону Советской Прибалтики прославились летчики Нельсон Степанян, Лазар Чапчахов, Саркис Айрапетов и многие другие. О геройстве танкиста, комсомольца М. М. Бабаяна знали на всем Северо-западном фронте.

44 1951 թ. Ար. Սագոյանին շնորհվել է կոնտր-ադմիրալի կոչում։ Նա ռազմա-ծովային գիտությունների թեկնածու է։ Այժմ պահեստի կոնտր-ադմիրալը բնակվում է Մոսկվայում։

45 Տե՛ս ՌՇԿ արխիվ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 170։

46 Նույն տեղում, գ. 481, թ. 383։